ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ. 50բ հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը ծնվել է 1927թ. մարտի 10-ին Խորհրդային Հայաստանի Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում:

1949թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1953թ. աշխատել է Խորհրդային Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում: 1954-1957թթ. եղել է Խորհրդային Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կադրերի և ասպիրանտուրայի բաժնի պետ, 1954-1971թթ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության գիտքարտուղար, 1964-1967թթ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կոորդինացիոն խորհրդի նախագահի տեղակալ, 1971-1979թթ.՝ Գիտությունների ազգային ակադեմիայի գլխավոր գիտքարտուղարի տեղակալ, 1979-2002թթ.՝ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, 2002-2004թթ.՝ Գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիայի քարտուղար:

1980-2004թթ. եղել է Երևանի պետական համալսարանի դասախոս:

1967թ. Հրանտ Ավետիսյանին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1991թ.՝ պատմական գիտությունների պրոֆեսորի կոչում:

1996թ. եղել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս: Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանին, 1918թ. մայիսյան հերոսամարտին, միջազգային կոմունիստական շարժմանը, Անդրկովկասում երիտասարդական հեղափոխական-դեմոկրատական շարժումներին, Հայաստանի կոմերիտմիության պատմությանը, Հայկական հարցում Թուրքիայի, Ռուսաստանի, եվրոպական տերությունների քաղաքականությանը, ռուսական բանակի հայ զորահրամանատարների գործունեությանը:

Հրանտ Ավետիսյանը պարգևատրվել է Պատվո նշան շքանշանով, ՀԼԿԵՄ մրցանակի դափնեկիր է:

Հրանտ Ավետիսյանը մահացել է 2004թ. Երևանում:

Ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.50բ հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հրանտ Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հրանտ Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ